լեալի լերինքը, ի հիւսիս արեւմուտս Բօզ-Թեփէ, Շահկօլ և մեծ ու փոքր Սուկաւէտ լեռներն և որոց ամբողջ հարաւային կողերն, ի հարաւ արեւմուտս Կելինի, Բոճոյի և Պլիճ կետուկի շղթան և որոց հիւսիսային կողերն, ի հարաւ Արածանւոյ ընթացքը և որոյ ձախ ափին վերայ գտնուած ծաղկոտն գաւառն և որոյ ետեւն բարձրացած ծաղկանց լեռներու շղթայն, որ մինչեւ Նպատ կը ձգուի յարեւելս կոյս 8—9 ժամ հեռաւորութեան վերայ, յարեւելս Սինակ լեռներն և որոց ի հարաւ արեւմտեան կողերն և ի հիւսիս ուղղակի Մերկեզերի ձորահովիտն, որ կայ Զամչայ լերան հարաւային կողերուն վերայ։

Քանի քանի անգամ օթեւանած եմ Աշխալի, հիւրասիրուած եմ ռէս Փիրոյի տունը, ժամերով մնացած եմ այս տեղ, պատիւ տեսած եմ այս նահապետական տան մէջ. սակայն համբերութիւնս չէ տարած մնալ սենեկի մէջ փռուած գորգերու վերայ և հանգիստ առնել, այլ միշտ և յմիշտ աճապարած եմ տանեաց վերայ բարձրանալ, գիւղիս քաղցր օդով և զմայլեցուցիչ տեսարաններով յագենալ։

Թոյլ տուր հորիզոնը կազմող լեռներն, մօխր դաշտ, դարձեալ տեսարան. յարեւմուտս կերեւին Ֆերան, Սեւ Իրիցու գիւղ, Ղայարէկ, Մամըտան, Միրանկի, Շամեան Եկն. գիւղօրայք և որոց քաւշաններն. արեւմտեան հիւսիս՝ Ամատ, Հայտար օղլի, Խաչլու, Թ. գալէ և Մօլլա-Սիւլէյման. ի հարաւ՝ Գարա-քիլիսէ $1\,{}^{1}/_{2}$ ժամ հեռուն, Հաճի-Սաֆար. ի հարաւ արեւելս Երանոս ${}^{1}/_{2}$ ժամ հեռուն, որ կայ Գաշլի Ջրին ձախ ափին վերայ. Ջաջուռայ Իրիցու և Զամիլու գիւղ մի ժամ հեռին, Նաւիկ 2 ժամ, Մանկասար 3 ժամ, իսկ յարեւելս